

Երևանի Մայաթ-Նովա պողոտա-Աբովյան փողոց խաչմերուկի ստորգետնյա անցման կառուցում՝
մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանի 2-րդ մուտքով



**Ծրագրի
նկարագիրը**

Մույն ծրագրով առաջարկվում է Երևանի Մայաթ-Նովա պողոտայի և Աբովյան փողոցի խաչմերուկում կառուցել ստորգետնյա ուրբանիզացիա՝ հետիոտն անցումով, առևտրա-հասարակական սպասարկման նշանակության տաղավարներով, ինչպես նաև նախկինում նախատեսված մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանի երկրորդ մուտքի վերին նախասրահով:

Մետրոպոլիտենի «Երիտասարդական» կայարանի երկրորդ մուտքի վերին նախասրահը նախատեսվում է կառուցել Աբովյան փողոցին հարող բնակելի տան բակում՝ մետրոպոլիտենի գոյություն ունեցող թունելների ուղղությամբ: Ուղևորների մուտքը վերին նախասրահից դեպի գոյություն ունեցող ստորգետնյա կայանը կկազմակերպվի շարժասանդուղքի և կառուցվելիք թունելի /երկարությունը՝ 50մ/ միջոցով:

Մետրոպոլիտենի նախասրահը գետնանցումով /լայնությունը՝ 7մ/ կմիանա Աբովյան փողոցի տակ նախատեսվող տարածքին: Տվյալ տարածքում կարելի է նախատեսել նաև առևտրի տաղավարներ:

Առաջարկը ներկայացվում է հետևյալ 3 տարբերակով՝


Տարբերակ 1. Կառույցն ընդգրկում է հիմնականում խաչմերուկի հատվածը՝ դեպի կայարան գետնանցումով,

Տարբերակ 2. Կառույցն ընդգրկում է Աբովյան փողոցի ստորգետնյա հատվածը՝ մինչև բնակելի շենք,


Տարբերակ 3. Կառույցը տարածվում է Մայաթ-Նովա պողոտայով և Աբովյան փողոցով՝ առանց դեպի կայարան գետնանցման, որը կարող է նախատեսվել 2-րդ փուլում:

**Տեխնիկական
ցուցանիշներ**


Տարբերակ 1. Մակերեսը՝ 3 260 քմ /առանց դեպի կայարան գետնանցման/:



Տարբերակ 2. Մակերեսը՝ 3 000 քմ /առանց դեպի կայարան գետնանցման/:



Տարբերակ 3. Մակերեսը՝ 5 700 քմ:



Ծրագրի ժամկետներ

Ծրագրի իրականացման ժամկետները՝
 - ստորգետնյա անցման շինարարություն՝ 2 տարի,
 - մետրոպոլիտենի նախասրահի շինարարություն՝ մինչև 4 տարի:

Ծրագրի արժեքը

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումները կկազմեն 4-7 մլն ԱՄՆ դոլար՝ առանց ստորգետնյա ինժեներական կոմունիկացիաների տեղափոխման աշխատանքների արժեքի:

Ներդրումների ձևը

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր հատված

***և հիմնական
պայմանները***

համագործակցության շրջանակներում:

Ներկա իրավիճակ

Առկա են կառուցապատման էսթիլային նախագիծ-առաջարկներ:

